ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հոկտեմբերի 2021 թվականի N **205**

ՆՈՆԱ ՄԻՇԱՅԻ ՉԱՏԻՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստեփանավան համայնքի բնակչուհի Նոնա Միշայի Չատինյանը դիմել է Ստեփանավանի համայնքապետարան իր նկատմամբ օգնական (պատրոն) նշանակելու խնդրանքով:

Նոնա Միշայի Չատինյանը ի ծնե տառապում է Մանկական ուղեղային կաթված հիվանդությամբ: Հիվանդության պատճառով վերջինս չի կարող ինքնուրույն իրականացնել որոշ գործողություններ, սահմանափակված է շարժունակությունը, որն էլ խոչընդոտ է հանդիսանում Նոնա Միշայի Չատինյանի կողմից իր իրավունքների իրականացման և պաշտպանության, ինչպես նաև պարտականությունների կատարման համար:

Հաշվի առնելով այն, որ Նոնա Միշայի Չատինյանը տվել է իր համաձայնությունը, որ իր եղբայրը՝ Էդուարդ Միշայի Չատինյանը նշանակվի իրեն օգնական (պատրոն), հիմք ընդունելով Ստեփանավանի համայնքապետարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 28.09.2021թ. նիստի եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02 հունիսի 2016թ. թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 24.02.2011թ. թիվ 164-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման 9-րդ կետի 14-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով ***որոշում եմ.***

1. Չափահաս, գործունակ քաղաքացի՝ Նոնա Միշայի Չատինյանի (ծնված՝ 13.06.1979թ., անձնագիր՝ AT0635458, տրված՝ 20.01.2021թ., 053-իկողմից) նկատմամբ անժամկետ պատրոն (օգնական) նշանակել նրա եղբայր՝ Էդուարդ Միշայի Չատինյանին (ծնված՝ 05.04.1978թ., անձնագիր՝ AS0587483, տրված՝ 15.05.2019թ., 053-ի կողմից):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» հոկտեմբերի 2021 թվականի N 206

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ ***որոշում եմ***

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով 2021 թվականի նոյեմբերի 14-ին կայանալիք ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Ստեփանավան համայնքի տարածքում նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Մ.Պապյան և Գ. Նժդեհ փողոցների խաչմերուկում գտնվող գովազդային վահանակ - 4քմ
2) Միլիոնի և Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում, այգու հարևանությամբ գտնվող գովազդային վահանակ - 4քմ
3) Կաթնաղբյուր բնակավայր 1-ին փողոց 4 բնակարան - 5քմ
4) Կաթնաղբյուր բնակավայր 3-րդ փողոց 10 բնակարան – կից կառույց - 5քմ
5) Կաթնաղբյուր բնակավայր 10-րդ փողոց 3 բնակարան շենք 3 - 6քմ
6) Ուրասար բնակավայր 3-րդ փողոց 26 ակումբի շենք
7) Ուրասար բնակավայր 3-րդ փողոց 28 խանութի շենք

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» հոկտեմբերի 2021 թվականի N **207**

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջետային գործընթացը սկսելու նպատակով՝ ***որոշում եմ***

1. Հաստատել Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Ընդունել ի գիտություն, որ
   1) Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը ներառում են կապիտալ բնույթի ծախսերի մասով սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծահախահաշվային փաստաթղթերը, իսկ ընթացիկ ծախսերի գծով՝ հաշվարկ հիմնավորումները:
   2) Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելիս պետք է հաշվի առնվեն համայնքի զարգացման ծրագրերի հիմնական ուղղությունները:
3. Հանձնարարել Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներին, վարչական ղեկավարներին և համայնքային բյուջետային հիմնարկների ղեկավարներին՝
   1) 2022 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը ներկայացնելիս հաշվի առնել համայնքի բնակիչներից, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտներից ստացված առաջարկությունները:
   2) Սույն որոշման հավելվածով հաստատված ժամանակացույցով ներկայացնել բյուջետային ֆինանսավորման հայտերը, իրենց պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:
4. Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետին՝ ըստ անհրաժեշտության զեկուցել ժամանակացույցով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքի շեղումների վերաբերյալ:
5. Սույն որոշման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների վրա:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հոկտեմբերի 2021 թվականի N 208

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 2019թ. հունիսի 26-ի թիվ 49-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի Չարենցի փողոց թիվ 102 հասցեում փաստացի բնակվող Մարտիկ Շահինյանի 05.10.2021թ. թիվ Շ-473 դիմումը, Չարենցի փողոց թիվ 127 հասցեի բնակվող Նարինե Մարտիրոսյանի 05.10.2021թ. թիվ Մ-472 դիմումը, Չարենցի փողոց թիվ 128 հասցեի բնակիչ Աշոտ Հարությունյանի 06.10.2021թ. թիվ Հ-475 դիմումը և Չարենցի փողոց թիվ 127/1 հասցեի բնակիչ Մելանյա Սարգսյանի 06.10.2021թ. թիվ Ս-474 դիմումը, Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 08.02.2021թ. թիվ 11/1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 06.10.2021թ. արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան համայնքի բնակիչներ՝ Մարտիկ Շահինյանի, Նարինե Մարտիրոսյանի, Աշոտ Հարությունյանի և Մելանյա Սարգսյանի ընտանիքներին տրամադրել 30000-ական (երեսուն հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հոկտեմբերի 2021 թվականի N 209

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0264-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՄԻԼԻՈՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 142 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գեղամ Գրիշայի Ազատյանի կողմից ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Միլիոնի փողոց թիվ 142 հասցեում գտնվող հողամասի սահմանային չափերը ճշտելու, հողամասի վրա առկա բնակելի տունը, ինքնակամ վերակառուցված բնակելի տունը և ինքնակամ կառուցված պարիսպները օրինականացնելու խնդրանքը, 07.10.2019թ. N 07102019-06-0027 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ բնակելի տան ինքնակամ վերակառուցումը և պարիսպների կառուցումը՝ չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Ճշտել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Միլիոնի փողոց թիվ 142 հասցեի, 06-007-0264-0012 կադաստրային ծածկագրի տակ գտնվող Գեղամ Գրիշայի Ազատյանին սեփականության իրավունքով պատկանող 0.084 հա մակերեսով հողամասի սահմանային չափերը համաձայն «ԱՐՏՑՈՄ ՍԱՔԱՆՑԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Միլիոնի փողոց թիվ 142 հասցեի, Գեղամ Գրիշայի Ազատյանին սեփականության իրավունքով պատկանող 06-007-0264-0012 կադաստրային ծածկագրի տակ գտնվող՝ 0.084 հա հողամասում ինքնակամ վերակառուցված՝ 81.9 քմ ներքին մակերեսով բնակելի տան նկուղը, 8.6 քմ ներքին մակերեսով բնակելի տան նկուղը, 23.4 քմ մակերեսով աստիճանահարթակները, 102.1 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը, 8.4 քմ

բնակելի տան 1-ին հարկը, 13.7 քմ մակերեսով աստիճանահարթակները, 93.1 քմ ներքին մակերեսով բնակելի տան ձեղնահարկը, 26.5 քմ մակերեսով բաց պատշգամբները, 7.2 քմ մակերեսով աստիճանահարթակը և 22.6 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպները:

3. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 364.9 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ վերակառուցված բնակելի տան համար 610478.0 /վեց հարյուր տաս հազար չորս հարյուր յոթանասունութ/ ՀՀ դրամ և 22.5 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպների համար 37643.0 /երեսունյոթ հազար վեց հարյուր քառասուն երեք/ ՀՀ դրամ: Ինքնակամ վերակառուցված բնակելի տան և ինքնակամ կառուցված պարիսպների օրինականացման վճարի չափը կազմում է՝ 648121.0 /վեց հարյուր քառասունութ հազար մեկ հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001712 հաշվեհամարին:
4. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

հարվեստամարին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հոկտեմբերի 2021 թվականի N 210

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ 0.00759 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Գագիկի Ղազարյանի կողմից լիազորված անձ Իրինա Գուրգենի Առաքելյանի ներկայացված դիմումը, 29.04.1995թ. կազմված սեփականության վկայագիրը, 02.08.2021թ. թիվ 5008 գրանցամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «ԱՐՏՑՈՄ ՍԱՔԱՆՑԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը և այն հանգամանքը, որ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.00759 հա հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով՝ 59-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել Ստեփանավան քաղաքի Հոկտեմբերյան փողոց 1-ին փակուղի թիվ 2 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար փաստացի սահմանազատված 0.00759 հա մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան քաղաքի Հոկտեմբերյան փողոց 1-ին փակուղի թիվ 2 հասցեի հողամասի մակերեսը՝ 0.00759 հա

   բ/ հողամասի սահմանները որոշվում են՝ «ԱՐՏՑՈՄ ՍԱՔԱՆՑԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի համաձայն
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.00759 հա մակերեսով հողամասը, որի նկատմամբ չեն պահպանվել հողհատկացման հիմքերը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, անհատույց սեփականության իրավունքով հատկացնել Ստեփանավան քաղաքի Մ. Բաղրամյան փողոց 1-ին փակուղի թիվ 4 հասցեի բնակիչ Տիգրան Գագիկի Ղազարյանին և մինչև 2001թ. կառուցված բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. Ստեփանավան քաղաքի Հոկտեմբերյան փողոց 1-ին փակուղի թիվ 2 հասցեում գտնվող, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ 1970թ. կառուցված՝ 26.2 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել նրա սեփականության իրավունքը:
4. Հաստատել վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց 1-ին փակուղի, թիվ 2 բնակելի տուն:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հոկտեմբերի 2021 թվականի N **211**

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 2019թ. հունիսի 26-ի թիվ 49-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի Պրոմեթեյ-2 փողոց վ/տ հասցեի բնակիչ Սիլվա Զուրաբյանի 30.09.2021թ. թիվ Զ-466 դիմումը, Պրոմեթեյ-2 փողոց վ/տ հասցեի բնակիչ Անահիտ Առաքելյանի 11.10.2021թ. թիվ Մ-480 դիմումը և Ուրասար վարչական բնակավայրի 4-րդ փողոցի թիվ 166 հասցեի բնակիչ Լիդիա Առուստամյանի 12.10.2021թ. թիվ Ա-487 դիմումը Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 08.02.2021թ. թիվ 11/1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 12.10.2021թ. արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի բնակիչներ՝ Սիլվա Զուրաբյանի, Անահիտ Առաքելյանի, ընտանիքներին տրամադրել 20000-ական (քսան հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն, իսկ Լիդիա Առուստամյանի ընտանիքին 30000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ